№ 107 Յունիսի 25 (Յուլիսի 7) 1880 Յունիսի 25 (Յուլիսի 7) № 107

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Ռացի կիրակի և ազգ օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տարրական մտքեր։—Ներքին տեսութիւն։ Նամակ Մոսկվայից։ Նամակ Շուշուց։—Արտաքին տեսութիւն։ Բերլինի կոնֆերէնցիա։ Ֆրանսիա։ Նամակ Թիւրքիայից։ Նամակ Դավրէժից։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Սովը Հայաստանի մէջ։

ՏԱՐՐԱԿԱՆ ՄՏՔԵՐ

II

Մենք ասեցինք մեր երէկվայ համարում, որ ազգութիւնը կազմող գլխաւոր հիմունքները երեք են՝ ցեղը, լեզուն և հայրենիքը։

Բայց այդ երեք հիմունքներից ամենագլխաւորն է՝ հայրենիքը։ Եթէ լեզուն պահպանվել է, իսկ հայրենիքը կորել է,—պէտք է դարձեալ ստեղծել մի նոր հայրենիք, եթէ ոչ լեզուն էլ կը կորչի։ Եթէ հայրենիք կայ, իսկ լեզուն կորել է, ազգութիւնը դարձեալ գոյութիւն կարող է ունենալ, թէև նոր ձև կընդունի, նոր ազգութիւն կը ստեղծվի։

Հրէաները կորցնելով հայրենիք և լեզուն, և պահպանելով միմիայն կրօն,—անհետացան որպէս ազգութիւն, և պահպանվեցին միմիայն որպէս կրօնական հասարակութիւն, որպէս աղանդ։

Եթէ հայերը անհետացան Լեհաստանում, այդ այն պատճառով չէ, որ նրանք փոխեցին կրօնը, լուսաւորչականներից կաթոլիկ դարձան, բայց այն պատճառով, որ կորցրին հայրենիքը և լեզուն և խիտ կերպով մի տեղ չը բնակվելով, ցիր ու ցան եղան լեհացիների մէջ, չը կարողանալով, փոքր թւով էլ լինելով, իրանց համար նոր հայրենիք ստեղծել։ Եթէ Լեհաստանի հայերը լուսաւորչական էլ մնային, այնու ամենայնիւ նրանք որպէս ազգութիւն կանհետանային և կը դառնային լուսաւորչական դաւանութեան լեհացիներ, կորցրած լինելով իրանց հայրենիքը և իրանց մայրենի լեզուն։

Բայց ոչ մի տեղ պատմութեան մէջ մենք չենք տեսնում, որ մի ազգութիւն մնալով իր հայրենիքում և պահպանելով իր մայրենի լեզուն, կորչէր, անհետանար որպէս ազգութիւն, միայն այն պատճառով, որ իր կրօնը փոխած լինէր։

Յայտնի է որ պարսիկները առաջ կրակապաշտ էին։ Երբ նրանք ընդունեցին մահմեդականութիւնը, բայց պահպանեցին իրանց հայրենիքը և լեզուն,—նրանք դարձեալ մնացին նոյն պարսիկներ, մնացին նոյն ազգութիւն։ Եթէ այսօր կամ վաղը ամբողջ պարսից աղգը, կամ նրա մի մասը ընդունէր քրիստոնէութիւնը,—պարսիկները դարձեալ ազգութեամբ պարսիկ կը մնային, որովհետև փոխելով կրօնը, նրանք չեն փոխում իրանց ազգութիւնը, չեն մոռանում իրանց մայրենի լեզուն, չեն կորցնում իրանց հայրենիքը։

Հրէաները կորան որպէս ազգութիւն, որովհետև կորցրին իրանց մայրենի լեզուն և թողեցին հայրենիքը, պահպանելով միմիայն կրօնը։ Բայց եթէ նրանք մնային իրանց հայրենիքում, պահպանէին իրանց մայրենի լեզուն, և մինչև անգամ փոխէին իրանց կրօնը, թողնէին մովսիականութիւնը և ընդունէին իրանց միջից ծագած նոր վարդապետութիւնը, քրիստոնէութիւն — հրէաները մինչև այժմ դարձեալ կը մնային մի ազգութիւն։

Ով չը գիտե որ հայերն էլ կրակապաշտ էին. բայց այն ժամանակ նրանք նոյնքան և գուցէ աւելի լաւ, աւելի ազգասէր հայեր էին, քան թէ այժմ։ Ընդունելով քրիստոնէութիւնը, բայց պահպանելով իրանց մայրենի լեզուն և մնալով իրանց հայրենիքում՝ հայերը դարձեալ հայեր մնացին։ Եւ միայն այն ժամանակ հայերը, կամ նրանց մի մասը սկսեցին կորցնել իրանց ազգութիւնը, երբ սկսեցին զաղթել իրանց հայրենիքից և մոռանալ իրանց մայրենի լեզուն։

Մի հայրենիքում բնակվող մի լեզու խօսող ազգութեանը պատկանող անձինք մի ազգութիւն են կազմում, չը նայելով, որ նրանք բոլորն էլ այլ և այլ դաւանութիւններին պատկանէին։ Այդ երևոյթը նշմարելի է ոչ թէ միայն լուսաւորված երկիրներում, օրինակ Գերմանիայում, Ֆրանսիայում, կամ Անգլիայում, որտեղ կաթոլիկ, անգլիական, լութերական, կվակեր և այլն լինելը նշանակութիւն չունի ազգութեանը պատկանելու համար, բայց նոյն իսկ անզարգացած և անհամբերող մի երկրի մէջ, ինչպէս Պարսկաստանն է. ոչ որի գլխում չի մտնի ասել որ բաբիստները, կամ հին կրակապաշտները, դամբրները, որոնցից շատերը դեռ մնացին Պարսկաստանում, պարսիկ չեն, որովհետև մահմեդական չեն....

Քարոզել մի ազգութեան, որ քո կրօնն է միայն քո ազգութեան հիմունքը, կը նշանակէ ուզենալ ոչնչացնել, սպանել այդ ազգութիւնը, կը նշանակէ ասել նրան՝ «Կարող ես կորցնել հայրենիքդ էլ լեզուդ էլ միայն կրօնը պահպանիր, ուր և ուզենաս գաղթիր, ի՞նչ լեզուով և ուզենաս խօսիր», կը նշանակէ դատապարտել այդ ազգութիւնը միմիայն կրօնական աղանդ լինելու, աւելի ոչինչ։

ՍՈՎԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

I.

Թիւրքաց Հայաստանի սովատանջների դրութիւնը։—Որտեղ է աւելի տարածված սովը։—Տեղեկութիւններ Կ. Պոլսի կենտրոնական մանտաժողովի։—Սովի պատճառական պատճառներ. արտակարգ ընական երևոյթներ և հացի պաշարի սպառվելը Հայաստանում մինչև վերջին պատերազմը և պատերազմից յետոյ։—Հարկեր։—Թափառական ցեղեր և աւազակութիւններ։—Մշտական պատճառներ. հողային յարաբերութիւններ և բէկերից կախված լինելը։—Ճանապարհների բացակայութիւնը։—Հայերի թվի պակասելը և գաղթականութիւնների պատճառները։—Կայմէի և մեթալիքի վերցվելը չրջաբերութիւնից, հաց բերելու արգելքը և այլն։—Կ. Պոլսի և Վանի մանտաժողովներ։—Ռուսաստանից եկած օգնութիւնը։

Թիւրքաց Հայաստանի մէջ այժմ տիրող սովը մեզ ամենքիս զբաղեցնում է, իւրաքանչիւր հայի մտատանջութեան առարկայ է դարձել այն հարցը թէ ինչպէս պէտք է օգնութիւն հասցնել մեր սովատանջ եղբայրներին։ Այդ սովի մասին դրվում է թէ հայոց, թէ ռուս և թէ եւրոպական լրագիրներում, ամեն տեղ, ուր որ հայեր կան, նուիրատուութիւններ են հաւաքվում յօգուտ սովատանջների, մի քանի հայաբնակ քաղաքներում հիմնվել են օգնութեան մանտաժողովներ, և այն։

Դասախօսութեանս նպատակն է կարողութեանս չափ ամփոփել այն բոլոր տեղեկութիւնները որ ունենք Հայաստանի մէջ այժմ տիրող սովի մասին, նկարագրել սովատանջների դրութիւնը Թիւրքաց Հայաստանի մէջ, ցոյց տալ թէ ինչ պատճառներից է առաջ եկել այդ սարսափելի աղետը և վերջապէս աչքի անցնել մի քանի ամենանոր պատմական իրողութիւնները և եւրոպական յայտնի զիտնականներից մի քանիսների կարծիքները առհասարակ սովի մասին, նմանապէս և նրանց առաջարկած միջոցները սովի երևալուն կամ տարածմանը առաջն առնելու համար։

Ուրիշ կողմից այդ դասախօսութենից գոյացած արդիւնքը նուիրվում է Հայաստանի սովատանջների օգտին։

Թիւրքաց Հայաստանի մէջ այժմ տիրող սովի մասին մենք մեծ մասամբ մեր տեղեկութիւնները քաղում ենք Կ. Պոլսի հայոց լրագիրներից, տեղական լրագիրների թղթակցութիւններից, Կ. Պոլսի հայոց կենտրոնական մանտաժողովի ձեռքով մեզ հաղորդված և տպագրված լուրերից և հեռագիրներից և վերջապէս մասնաւոր նամակներից։

Սովը տարածված է ամբողջ Հայաստանում, և անցնում է Փոքր-Ասիա։ Սովատանջ ժողովուրդը կազմում է մի անազին չղթան, սառնապատ Երզրումից սկսած մինչև տօթային Բաղդադը, ամփոփում է իր տարածութեան մէջ ռուսական և պարսկական սահմանագլխի գաւառները, անցնելով մինչև Սև ծովի և Պարսից ծոցի ափերը։ Սարսափելի նեղութեան մէջ են Ալաշկերտ, Հին-Բայազէդ, Վան, Մուշ, Բիթլիս, Երզրում, Սղերթ, Մուսուլ, Պլէճիկ, Կէյվէ, Նիկոմեդիա և այլն։

Կ. Պոլսի մանտաժողովը հրատարակեց մի շարք հեռագիրների, որ նա ստացել է զանազան գաւառներից։ Այդ բոլոր հեռագիրները միմեանց նման են, բոլորն էլ սարսափելի գոյներով են նկարագրում սովամահ ժողովուրդի տանջանքները։ Այդ հեռագիրներից երկուսը կամ երեքը աչքի անցնելով, կը ծանօթանաք և մնացածների տխուր բովանդակութեան հետ։ Օրինակի համար բերում եմ այստեղ երկու երեք հատ այդ հեռագիրներից։

«Վան, 15/27 մարտի։ Ժողովուրդը հագիւ տասն և հինգ օրվայ համար ցորեն ունի։ Տեղական կառավարութիւնը միայն քաղաքի մէջ տասն և երկու հազար սովեալ մարդկանց հաց է մատակարարում։ Օրական հարիւր տիրէմ հացը պարտաւորվեցաւ յիսունի իջեցնել։ Մեր ձրիաբար կերակրած սովեալների թիւը չորս հազարից աւելի է։ Մի քանիչ յանձնաժողով ամբարների տեր կարծեցեալ անները խուզարկեց և ոչինչ չը գտաւ։

«Երզրում, 13/29 մարտի։ Մեզ հասած մանրամասն տեղեկութիւնների համեմատ Ալաշկերտում մի ամսվայ մէջ 100 հայեր սովամահ են եղել։ Ղարաքլիսայի և Ալաշկերտի կողմերում աւելի քան 3500 հոգի հացի կարօտ են. եթէ իր ժամանակին նրանց օգնութիւն չը հասցնվի, ապագայում մեծ վտանգ է սպառնում։»

«Սղերթ, 17/29 մարտի։ Ցորենի վաթսուն հոխայի գինը երեք ոսկի է։ Գիւղացիները թափվեցան քաղաքը. քաղցածութիւնից մեռնելու աստիճանի են հասած։ Մահմեդականները հաւասարապէս թշուառ են։ Գթութեան ենք սպասում։»

«Մուսուլ, 26 մարտի։ Անկարագրելի է սովեալների տեսարանը, որոնք ամեն կողմից դիմում են դէպի քաղաքը և հաւաքվում են այստեղ։ Մինչև անգամ գարի չը գտնելով, դիակներով են կերակրվում և հիւանդութիւնների են ենթարկվում։»

«Պլէճիկ, 17/29 մարտի։ Սովը գիւղերի մէջ օրից օր սաստկանում է։ Գիւղացիները թափվեցան քաղաքը։ Արքունի ամբարներից պարտքով ցորեն խնդրեցին հունձքի ժամանակում վճարելու պայմանով, բայց ոչինչ չը կարողացան ստանալ։ Ձեր չնորհած ոսկին բաւական չէ։ Արագ և հզօր օգնութիւն է հարկաւոր։»

«Կէյվէ, 15/27 մարտի։ Չորս ամիսների ընթաց-

Իսկ ասել մի ազգութեանը՝ «Պահպանի՛ր հայրենիքդ և ազգային լեզուդ» կը նշանակի ուզենալ որ ազգութիւնը գոյութիւն ունենայ։

Բայց քարոզել որ ամբողջ ազգութիւնը մի կրօնի մէջ մնայ,— դա բթամտութիւն է, որովհետև պատմութիւնը մեզ ցոյց է տալիս որ ամեն ազգերը փոխում էին իրանց կրօնը և դարձեալ ազգութիւն էին մնում։

Շատ ազգեր, և հայերից աւելի մեծերն ու զօրեղները, սաստիկ պատժվեցան, որովհետև չուզեցին ճանաչել իրանց կրօնաբաժան եղբայրներին։ Ֆրանսիան շատ փոշմանվեց որ Լուդովիկոս XIV-ի ժամանակ աքսորեց իր հայրենիքից բողոքական (հուգենօտ) քաղաքացիներին, Ֆրանսիացիների այդ լուսաւորված, աշխատասէր մասը, որոնք գնացին Պրուսիա և ծաղկեցրին այդ երկիրը, պրուսիացի դառնալով, իսկ Ֆրանսիան մեծ կորուստ զգաց, զրկվելով իր որդիների այդ աշխատասէր և հաւատարիմ մասից։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՅԻՑ

—

Մայիսի 10-ին

Մեր համարիւն վանեցոց աղէտալի տխուր վիճակը ենոցա կրած տառապագին նեղութիւնները ներկայ սովի երեսից աչքի առաջ ունենալով, մենք՝ պ. Դիմուշէլի պանսիօնի տակերտուհիներս յիշեցինք մեր հասակակից վանեցի բաղդաւորկ քոյրերին և 'ի նպաստ նոցա մեր օտարազգի ընկերուհիների մէջ մասնաւոր հանգանակութիւն բաց արինք։ Որովհետև ամենքս Զատկին մի քանի բուբլի տանից ստացել էինք, տօնի օրերը քաղցրացնելու մտքով, սուրբ և անհրաժեշտ պարտականութիւն համարեցինք մեզ այդ փոքրիկ գումարով մխիթարել մեր խեղճ քոյրերի բեկված սրտերը։ Եւ ահա ժողված 22 ր. գումարը նուիրատուաց անուանական ցուցակի հետ ուղարկում ենք առ ձեզ, պ. խմբագիր, խնդրելով տնօրինել որպէս արժանն է։ Նուիրատուները սոքա են։

Ե. Իզմիրեանց 3 ր., Ե. Լիանոզեանց 20 կ., Ա. Ященко 1 р., А. Костякова 1 р., А. Расторгуева 1 р., М. Курыдина 20 к., Н. Сорокина 40 к., Անայատ ոմն 50 կ., Անայատ ոմն 55 կ., Տ. Խլթճեանց 3 ր., Մ. Թումանեանց 60 կ., Ю. Ясюнинская 2 р., Е. Афремова 1 р., Е. Маркова 1 р., А. Федорова 40 к., Е. Тарновская 1 р., Ռ. Խլթճեանց 1 ր., Е. Бордманъ 1 р., Е. Шимко 1 р., Л. Марсочникова 1 р., Станкевичъ 40 к., А. Верхоглядова 60 к., Անայատ ոմն 15 կ.։

Օրիորդներ՝ Եկատերինէ Իզմիրեանց, Տիրուհի Խլթճեանց

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

—

12 յունիսի

Դեռ մի քանի ամիս սրանից առաջ տեղացի հայ երիտասարդներից կազմված մի մասնաժողով մտադիր էր հիմնելու Շուշում մի հասարակական ընթերցարան, որի համար և ստորագրութիւն բանալով, դիմել էր հայ հասարակութեան օժանդակութեանը։

Նուիրատուութիւնները լինելով շատ սակաւ և անբաւականացուցիչ, նոքա ստիպված էին դեռ ևս երկար միջոց չարունակելու նպաստներ հաւաքելը յօգուտ ընթերցարանի, սակայն, դժբաղդաբար, թանգութիւնը վրա հասնելով և հասարակութիւնը ըստ մեծի մասամբ զբաղված լինելով կենսական խնդիրներով, ընթերցարանը բանալու հարցը դեռ ևս մնում է զանցառութեան մէջ։ Անցնում են ամիսներ և չը նայելով որ նոքա սկզբում յաջողել էին մի 60-ի չափ անդամներ հաւաքել, սակայն նրանցից հազիւ թէ երրորդ մասը վճարում է իր տարեկան անդամակցութեան 10 բուբլին, իսկ մի քանիսը և գրեթէ մեծամասնութիւնը չեն ամաչում մինչև անդամ ջնջել տալու իրենց ստորագրածը։

Եթէ մենք չենք կարող չը խոստովանել, որ Շուշու հասարակութիւնը անտարբեր չը գտնվեց իր չքաւոր համաքաղաքացիներին թշուառութեան մէջ օգնութեան ձեռք կարկառել և որ իր առատ նուիրատուութեամբ նրանց պահպանել կարողացաւ, ուրեմն համարձակ կարելի է ասել, որ Շուշու հասարակութեան եթէ ոչ բոլորը, գրեթէ մեծամասնութիւնը չը համակրեց մի այդպիսի օգտաւէտ հիմնարկութեանը. նա խնայեց իր մի քանի բուբլիները այդպիսի մի բարեգործական նպատակը իրագործելու, մինչդեռ նա 5000 բուբլիներ չէ խնայում տալու այնպիսի խաբեբաների, որոնք մինչև անդամ չքաւորներին օգնելու անունով հաւաքելով փողեր, մի մասը գործ են դնում զատական թիքաների համար, իսկ մի մասը՝ աւելացածը, զանազան պատճառներով մնում է եկեղեցուն։ «Լաւ բուրվառ չունի» ասում է մէկը,—«լաւը նա է, որ մի լաւ արծաթէն Մոսկվայից բերել տանք»—«երեք հարիւր բուբլու չափ աւելանում է, լաւը նա է որ եկեղեցու թախտափուչը նորոգենք», և հազար ու մէկ այդպիսի զատողութիւններ. ահա այդպիսիներին հասարակութիւնը սովոր է տալու իր առատ նուէրները։

Ինչպէս լսում ենք, մասնաժողովը մտադիր է իր ժողոված աննշան գումարը կրկին վերադարձնել իր ենց տէրերին. էլ ինչ երեսով չատերը կարդալով Արցախեցու յօդուածները, ուրախ ուրախ միմեանց պատմում են թէ Շուշու հասարակութիւնը յիրաւի առաջինն է եղել Կովկասի մէջ, որ միշտ բարեգործական նպատակներով մեծ նուիրատուութիւններ է արել—հայը միշտ սիրում է գովասանքը։

Վերջացնելով նամակս կը յուսամք, որ մասնաժողովը չէ փոխի իր դիտաւորութիւնը և կաշխատէ կարելի եղածին չափ իրագործել իր սկսածը։ Լաւ է անագան, քան ոչ երբէք։

Այս օրերումս հասաւ Շուշի պ. Ս. Մանդինեանց։ Պ. Աղասարեանց տուեց իր հրաժարականը։

Աբէլ Ապրեսեանց

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԵՐԼԻՆԻ ԿՕՆՖԵՐԵՆՑԻԱ

—

Բերլինից «Polit. Corresp.» լրագրին գրում են հետևեալը։

Կոնֆերենցիայի վիճաբանութիւնները գաղտնի են պահվում։ Մինչև անդամ էկսպերտներին ոչինչ չեն հաղորդում կոնֆերենցիայի պարապմունքների ընթացքի մասին։ Նրանց միայն մի շարք հարցեր են առաջարկված, որոնց քննելուց յետոյ պէտք է պատասխան տան։ Ցայտնի չէ թէ կոնֆերենցիան կը հաւանի էկսպերտների առաջարկած նիւթը։ Այդ գաղտնապահութիւնը աւելի ծանր է Թիւրքիայի և Յունաստանի ներկայացուցիչների համար, քան թէ էկսպերտների և հետաքրքիր մամուլի համար։ Վերոյիշեալ երկու պետութիւնների ներկայացուցիչները ամեն միջոցներ գործ են դնում, որպէս զի մի բան իմանան, բայց նրանց աշխատանքները չեն աջողվում։ Ցոյս ունեն, որ կոնֆերենցիան մի որ և է դէպքում կը դաւաճանի իր բռնած ընթացքին։ Յունաստանի և Թիւրքիայի ներկայացուցիչները ստիպված են կոնֆերենցիայի անդամներին առանձին առանձին իրանց ցանկութիւնները յայտնել։ Յունաստանը այդ բանը արեց մի հաղորդութեան ձևով, յայտնի չէ Թիւրքիան ի՞նչպէս կը վարվի։ Մի բան յայտնի է, որ կոնֆերենցիան սահմանական գիծ կորոշի և կառաջարկի Թիւրքիային և Յունաստանին ընդունել նրան։ Մասնաժողովի ուղարկելը այդ դէպքում այն նպատակը կունենար, որ հետախուզէր, թէ մինչև ո՞ր սահման նոր սահմանական գիծը գործադրելի է։ Այս հանգամանքները ի նկատի ունենալով, դուցէ մասնաժողովը բոլորովին չը գնայ ո՞ր որոշված տեղը, կամ նրա ուղևորվելը կախումն կունենայ այն պատասխանից, որ կոնֆերենցիան կը ստանայ Թիւրքիայից և Յունաստանից։ Այսպէս թէ այնպէս մասնաժողովի ուղարկելու հարցը այն ժամանակ կը քննվի, երբ կոնֆերենցիան մնացած բոլոր իր աշխատանքները կը վերջացնի։

Մի և նոյն լրագրին Բերլինից հեռագրում են։ Էկսպերտների խորհուրդը տեղեկութիւններ հաւաքելու բնաւորութիւն ունէր, որովհետև ռուս էկսպերտը խորհուրդին չէր մասնակցում տեղը ուշ հասնելու պատճառով։ Թիւրքիան մինչև այժմ կոնֆերենցիային գրաւոր ոչինչ հաղորդութիւն չէ արել։ Թիւրքաց ներկայացուցիչները ասում են, որ իրանց կառավարութիւնը կոնֆերենցիայից խորհուրդի է սպասում և ոչ թէ վճռի։ Նրանց խօսքով Թիւրքիան պատրաստ է խաղաղութեանը ամեն տեսակ զոհաբերութիւններ անել, որպէս զի կարողանայ իր երկրի մէջ մտցնելի վերանորոգութիւնները իրագործել։ Այնուամենայնիւ Բ. Դուռը չի ընդունի ոչ Վադդինգտօնի նախկին առաջարկութիւնները և ոչ Յունաստանի պահանջները։

ՖՐԱՆՍԻԱ

—

Ֆրանսիական պատգամաւորների ժողովը յունիսի 21-ին սկսեց մասնաժողովի անդամներ ընտրել կոմունարներին ընդհանուր ներումն շնորհելու և նրանց քաղաքական իրաւունքներ վերադարձնելու (ամնիստիայի) հարցը քննելու համար։ Մասնաժողովի անդամները տրամադրված են օրէնքի նախագիծը ընդունելու համար։ Մասնաժողովը խսկոյն սկսեց իր գործը։ Պատգամաւոր Անդրիէ այդ նիստի ժամանակ յայտնեց, որ ինքը ձայն կը տայ յօգուտ ամնիստիայի, բայց ի՞նչպէս կարելի է նրան իրագործել, քանի որ լրագրների մէջ այնպիսի յօդուածներ են տպվում, որոնք պարզ ասում են, թէ ամնիստիան կիրագործէ սոցիալիստների նախագիծը։ Անդրիէ մեկնեց իր հայեացքը ամնիստիայի վրա։ Նա ասեց, որ այդ քայլը վերջ է դնում երկմտութեանը և թոյլ է տալիս զանազանել միմեանցից այն մարդկերանց, որոնք մարդասիրական զգացմունքից դրդված պահանջում են ամնիստիա նրանցից, որոնք այդ պահանջում են կոմունայի պրոգրամը իրագործելու

քում ձմեռվայ սաստկութենից և պաչարի սակաւութենից տանջվելով, միմեանց օգնելով ապրեցանք, բայց այժմ ամենքս էլ հաւասապէս քաղցած ենք։»

Եւ բոլոր հեռագիրների բովանդակութիւնը այդպէս տխուր, անմխիթար, յուսահատ է։

Աւելորդ եմ համարում ինձանից մի բան անգամ աւելացնել այդ տխուր նկարագրութիւններին։

Այժմ ինքն իրան հարց է առաջարկվում, թէ ինչպէս է եղել, որ այնպիսի մի հարուստ և բերրի երկիր, ինչպէս Հայաստանն է, հասել է այդ յուսահատական դրութեանը, ինչպէս է պատահել որ Հայաստանի ոչ մի գաւառում հաց չը կայ այս տարի և մարդիկ սովից մեռնում են։

Երաշտութիւնը. որ կարող է սով պատճառել, առհասարակ առաջ է գալիս կամ պատահական պատճառներից, կամ մշտական պատճառներից։

Պատահական պատճառներ ես անուանում եմ բնական անանցող երեոյթներ, ինչպէս օրինակ չորային եղանակը, անչափ առատ և անժամանակ անձրևները, կարկուտը, մորեխը, դաշտային մուկը և այլն, կամ քաղաքական և հասարակական տառապանքներ, ինչպէս օրինակ պատերազմը։

Անցեալ 1879 տարին չատ դժբաղդ տարի էր Հայաստանի համար։ Մի գաւառում չորային եղանակը այրել էր հունձքը, միւս գաւառում անընդհատ անձրևները փտեցրել էին ցանքերը, երկրի այլ և այլ տեղերում երևեցաւ մորեխը, դաշտային մուկը, որոնք ուտերեցին դաշտերը։ Բացի այդ բոլոր աղէտներից 1878 թվի ռուս-թիւրքաց պատերազմը արդէն սպառել էր Հայաստանի ցորենի բոլոր պաչարները։ Պատերազմը ամեն տեղ և ամեն երկրի համար մի տնտեսական աղէտ է, բայց մանաւանդ երբ պատերազմը լինում է Թիւրքիայի պէս մի երկրում։ Արդէն պատերազմից առաջ Թիւրքիան կրկնակի հարկ էր դրել Հայաստանի աղգաբնակութեան վրա, բացի սորանից երկու տարվայ հարկը կանխիկ էր պահանջում ժողովրդից, իսկ որտեղ ժողովուրդը փողով չէր կարող վճարել, նրանից խլում էին նրա ցորենի ամբողջ պաչարը։ Շատ տեղ պաչտօնեաները համ հարկ էին վերցնում, համ ստիպում էին ժողովրդին յանձնել տէրութեանը հացի կամ ալիւրի բոլոր պահեստները, խոստանալով վճարել գիւղացիներին իրանց մթերքի համար, բայց ի հարկէ մեծ մասամբ ժողովուրդը իրան խոստացած դրամը չէր ստանում։ Բացի սորանից Հայաստանի տեղական վարչութիւնը բանեցնում էր գիւղացիներին, ստիպելով նրանց իրանց հաչով տեղափոխել բեռները և պատերազմին հարկաւոր պաչարեղէնները իրանց սայլերով, ստիպում էր անվարձ աշխատել ճանապարհների և բերդերի կառուցման ժամանակ, ուրեմն բացի կրկնակի հարկը փողով, այն էլ կանխիկ երկու տարվայ համար և բնական արդիւնքներով հարկ վերցնելուց, խլում էր գիւղացու ոյժերը դաշտային աշխատանքներից, զբաղեցնելով նրան պատերազմական պատրաստութիւններով։ Վերջապէս սկսվեցաւ պատերազմը. դա եւրոպական կանոնաւոր պատերազմ չէ կարող համարվել, մի պատերազմ, որտեղ մեծ դեր է խաղում մոլեռանդութիւնը, հալածանքը, ոխը և ատելութիւնը։ Արդէն պատերազմից առաջ Վան քաղաքի կրակ ընկնելը ցոյց է տալիս թէ ինչպէս էին վերաբերվում Թիւրքերը դէպի իրանց հպատակ հայոց ազգութիւնը։ Պատերազմի ժամանակն էլ աւելի յայտնվեցաւ Թիւրքերի անզթութիւնը. մի կողմից նրանք սպառում էին հայի անտեսական ոյժերը, իսկ միւս կողմից թոյլատրում էին չէրկէզներին և քիւրդերին կողոպտել, ոչնչացնել հայերին, այրել հայոց ամբողջ գիւղերը։ Բացի սորանից, ինչպէս ամեն պատերազմի մէջ, թշնամի բանակները փոխադարձապէս ոչնչացնում, այրում էին հացի մթերանոցները և նոյն իսկ աղգաբնակութիւնն էլ այդ անում էր։ Երբ ռուսաց զօրքը մի տեղին մօտենում էր, մահմեդական գիւղերի բնակիչները յետ էին քաչվում և յետ քաչվելուց առաջ այրում, ոչնչացնում էին իրանց հացի պահեստները, երբ Թիւրքաց զօրքերը կրկին վերադառնում էին արդէն ռուսներից մի անգամ նուաճած երկիրը, քրիստոնեայ աղգաբնակութիւնը փախչում էր, ցրվում էր ռուսաց կամ պարսից սահմանները և փախչելուց առաջ այրում էր իր հացի բոլոր պահեստների մնացորդները։ Այդպիսով ոչնչանում էր Հայաստանի մէջ եղած հացի ամբողջ պաչարը, մի և նոյն ժամանակ պատերազմի պատճառով սպառվեցան ցորենները Ռուսաստանի և Պարսկաստանի Թիւրքիային սահմանակից գաւառներում։ Միայն մի կարգից դուրս աջող և բերրի տարի կարող էր պատերազմից յետոյ փրկել Հայաստանը և լրացնել նրա բոլոր կորուստները։ Բայց դժբաղդաբար պատերազմից յետոյ հետևեալ տարին անաջող և երաշտ տարի եղաւ։

Մշտական պատճառներ, որոնք տրամադրում են մի երկիր դէպի երաշտութիւնը և սովը, ես անուանում եմ այն հիմնական, արմատական պատճառներ, որոնք կապ ունեն մի երկրի տնտեսական և պետական սիստեմ, անկանոն և անկատար կազմակերպութեան հետ։

Ցայտնի է որ Հայաստանը չատ հարուստ և բերրի երկիր է, բայց չը նայելով որ նա այդքան հարուստ և բերրի է, նա այնքան վատ է կառավարված, և Հայաստանի տնտեսական դրութիւնը այնքան անկատար և պակասաւոր է, որ եթէ երաշտութիւն և սով առաջ բերող պատահական դէպքեր էլ չը լինէին, այդ երկիրը միշտ հակված կը լինէր դէպի երաշտութիւնը և սովը։

(Կը շարունակվի)

համար: Անդրիէի կարծիքով ամնիստիա շնորհելուց յետոյ կառավարութիւնը դէմ առ դէմ կը կանգնի այս վերջին տեսակի մարդկերանց հետ և նրանց ընդդիմանալու և եռանդոտ քաղաքականութեանը հետևելու համար այժ կը ստանայ թէ հասարակական կարծիքից և թէ Ֆրանսիայի ազգային երկու ժողովներից: Ամնիստիան կը շնորհվի ոչ թէ յօգուտ կոմունարների, այլ նրանց դէմ: Պատգամաւորների ժողովի ընտրած մասնաժողովը վճռեց, Ֆրէյսինէի կարծիքը իմանալուց յետոյ, իսկոյն ներկայացնել ժողովին իր զեկուցումն և առաջարկել նրա անյապաղ քննութիւնը: Պատգամաւորների ժողովի նոյն օրվայ բաց նիստի ժամանակ կարդացվեցաւ մասնաժողովի զեկուցումը ամնիստիայի մասին: Մասնաժողովը առաջարկեց կառավարութեան նախագիծը անփոփոխ ընդունել: Ժողովը վճռեց իսկոյն սկսել վիճաբանութիւններ: Հանրապետական ձախ կողմի անդամ Ժան-Կազիմիր-Պերիէ յայտնեց, որ նրա համար ծանր է ձայն չը տալ յօգուտ կառավարութեան նախագծի, բայց նա համաձայն է միայն մասնաւոր ամնիստիա շնորհել: Կառավարութեան այդ քայլը ոյժի նշան է, բայց նրան կարելի է անզգոյշ և անհաստատ քաղաքականութեան հետևանք համարել: Ֆրէյսինէ պատասխանելով Պերիէին ասեց, որ անցեալ փետրվարին ինքն էլ չէր մտածում յունիսին ամնիստիա առաջարկել, բայց պատմութեան ժամերը անհնարին է որոշել, իսկ հասարակական մի քայլ անելու համար ժամը առաջուց երբէք չէ որոշվում: Ամնիստիան այլ ևս յետաձգելը առիթ չի տայ: Երկիրը հանգիստ է և կարգապահութիւնը ապահոված: Երբէք Ֆրանսիայի մէջ այսպիսի հանգստութիւն չէ եղել, որովհետև կառավարութիւնը կարողանում է սանձահարել կուսակցական կրքերը: Նոյն 400 պատգամաւորները, որոնք փետրվարին ամնիստիայի թշնամիներ էին, այժմ նրա օգտին ձայն կը տան: Ամնիստիան այժմ ժամանակակից է: Կառավարութեան կարծիքով ժամանակը հասել է և հանրապետական մեծ կուսակցութեան շահերը պահանջում են ամնիստիան շնորհել: Երբ այդ հարցը բարեյաջող վախճան կունենայ, նրա հետևանքները կը ծառայեն հանրապետական կուսակցութեան շահերին: Բոնապարտիստ Պոլ դը-Կասանեակ մեղադրում էր կառավարութեան թուլութեան մէջ: Երկիրը, ասաց նա, բոլորովին հանգիստ չէ և այդ ապացուցանվում է Տրենկիէի ընտրութեամբ, որ ապօրինի է և Գամբետտայի դէմ է ուղղված: (Այս խօսքերի ժամանակ Գամբետտա թողնում է նախագահական աթոռը և նրան իր ընկերն է փոխարինում): Մի քանի մեղադրանքներից յետոյ, որ արին միմեանց բռնապարտեան և հանրապետական կուսակցութեան անդամները, Գամբետտա բարձրացաւ ամբիոնը և յայտնեց, որ ինքը մասնակցում է վիճաբանութիւններին արդարութեան ըզգացմունքից դրդված լինելով և ոչ թէ այն պատճառով, որ ամնիստիայի մեծ գործը մի մասնաւոր սկզբնաւորութեան գործ լինէր: Կառավարութիւնը անհրաժեշտ համարեց ամնիստիան: Ասում են, որ դա թույլ քաղաքականութեան հետևանք է: Բայց եթէ քննենք, թէ ինչ տեղից են առաջանում այդ մեղադրանքները, կը տեսնենք, որ ընդհակառակը դա հաշտութեան քաղաքականութիւն է: Ամնիստիան մինչև նոր ընտրութիւնները պէտք է անպատճառ տրվէր, որպէս զի թշնամի կուսակցութիւնները չը կարողանան նրանից օգուտ քաղել: Տաս տարի սրանից առաջ նոյն իսկ այս դահլիճի մէջ ժողովրդականութեան հարցն էր քննվում: Գամբետտայի կարծիքով այդ հարցը սխալ դրվեցաւ: Երկրին առաջարկեցին ընտրել երկուսից մէկը՝ կամ անակալութիւն, կամ անիշխանութիւն: Պարզ բան է, շարունակեց Գամբետտա, որ այս հարցի պատճառով մեծամասնութիւնը չի ոչնչանայ: Հասկանալի զգացմունքից դրդված մի քանի անդամներ բաժանվեցան իրանց ընկերներից, բայց նրանց օգնութիւնը զին ունի: Նրանք աշխատել են և չեն բաժանվի մեծամասնութենից որպէս զի դրանց աշխատանքները վարձատրվեն: Նրանք օգնեցին հանրապետութեան հաստատվելուն և կառավարութիւնը իրաւունք ունի հրաւիրել այդ անդամներին իրան հետևել: Նրանք պարտաւոր են մոռանալ և որովհետև ամենքը համոզված են, որ մի ժամանակ պէտք է ամնիստիա շնորհել, ուրեմն հարց է բարձրանում. արդեօք սրանից բարեպատեհ րոպէ եղե՞լ է այդ գործի համար: Ֆրանսիան կողմնապահ չէ դէպի ամնիստիան, բայց այդ հարցը նրան ձանձրացրեց և նա կամենում է վերջացնել ներքին անհամաձայնութիւնների այդ մնացորդը: Պէտք է կառավարութեան շուրջը ազնիւ մարդկերանց մի բանակ հաւաքել և հասկացնել ամենքին, որ հանրապետութիւնը ամենազօրեղ կառավարութիւն է, որովհետև նա պատժում է մարդկանց ոչ թէ մի ընտանիքի կամ մի անձնաւորութեան, այլ օրէնքի անունով: Մի քանի ամիս սրանից առաջ Եւրոպան անհանգիստ էր, նա ամնիստիայից վախենում էր: Ի՞նչ են մտածում այժմ մի և նոյն մարդիկը: Ի՞նչ են ասում նրանք: Նրանք ասում են, որ Ֆրանսիան վերադարձրեց իր հաւատարմութիւնը բարոյական հզորութեան տեսակէտից: Նրանք միաձայն ասում են, որ Ֆրանսիայի համար ամնիստիան ցանկալի է: Գամբետտա յիշեցրեց որ նա ամենաազնիւ և ամենազործունեայ ժողովուրդական մարդկերանց ներկայացուցիչ է, իսկ դրանք էլ իրանց թոյլութիւններն ունեն և երբէք մի սխալ արին: Այդ մարդկերանց մէջ ամնիստիայի կուստկիցներ կան: Տրենկէի ընտրութիւնը նրանց վերջին զէնքն էր: Տրենկէին (աքսորական կոմունար) աւելի շուտ պէտք էր վերադարձնել աքսորանքից: Մի՞թէ կարելի է մեղադրել ընտրողներին, որ նրանք Տրենկէի համար ձայն տուին, որպէս զի կարողանան նրան վերադարձնել իր ընտանիքին և երեխաներին: Անհրաժեշտ է կոմունայի յանցանքների վրա զերեզմանական քար դնել և ամենքին ասել. միայն մի Ֆրանսիա և մի հանրապետութիւն կայ:

Գամբետտայի ճառը մեծ ծափահարութիւններով ծածկվեցաւ. ամենքը նրան շնորհաւորում էին: Վիճաբանութիւնները վերջացան և պատգամաւորների ժողովը 310 ձայնի առաւելութեամբ 136 դէմ հաստատեց ամնիստիան: Վերջը պատգամաւորների ժողովը վճռեց Գամբետտայի ճառը տպել և հրատարակել Ֆրանսիայի բոլոր համայնքների մէջ:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻ

—

Վան, մայիս 19/31

Մայիս 19-ին ընդարձակօրէն գրեցինք ձեզ Հայաստանի ներկայ սովուն պատճառներն, զայն բառնալու համար գործադրուած միջոցներն, նորա տուած կորուստին որքանութիւնը և թէ սովուն բարձման հաւանականութիւն մը կայ թէ ոչ:

Այսօր ալ կը փութամք ահա սովուն վրա ուրիշ տեսակէտով գրել:

Անցեալ աշունը երբ արմտեաց թանգութիւնը սկսաւ և ցորենի գինը կրկնապատիկ և եռապատիկ բարձրացաւ, տեղւոյս հայ ժողովուրդը տակաւին չը գիտենալով թէ ցորենին գինը 25 անգամ բարձրանալ ունի (մեր նախորդ նամակին մէջ արմտեաց գիներն նշանակած էինք, յորմէ կը տեսնուէր թէ ցորենի գինը մօտ 25 անգամ թանգ է, քան սովէն առաջ եղած գինը), կարծեց թէ թանգութիւնը իր վերին աստիճանը հասաւ լմնցաւ արդէն: Եւ սկսաւ խորհել թէ ինչպէս պիտի ապրի. գիւղացիք համոզուած էին թէ պիտի մեռնին, քաղաքացիք անյոյս էին նոցա փրկութենէն, քրդերն կը յուսային հայոց ինչքերն աւարելով ապրել, իսկ կառավարութիւնը անկասկած կը սպասէր հայոց ահագին կոտորածը տեսնել և այդ յոյսն աւելի ապահով անելու համար չորս կողմերէն արմտեաց ի Վան փոխադրութիւնը անհնար կանէր, իսկ արտահանութիւնը կը քաջալերէր: Սակայն մինչդեռ այս տագնապի մէջ էր ամեն մարդ և ձմեռան կիսուն ցորենի գինը 10 անգամ թանգացաւ, և օրհասն առ դուրս կը սպասէր հէք սովատանջներու համար, մէյմն ալ աշխարհի չորս կողմ բնակած հայոց այն ընդհանրական ջանից աւետիքն հասաւ այստեղ, զորս ըսկսած էին ի գործ դնել ազատելու իրենց եղբայրներն այս բռնի սովուն անողոք ճիրանէն: Աւետիքն հասաւ թէ ոչ, գործին իրականութիւնն ալ նմա յաջորդեց: Եւ ահա տեղալ սկսան ամեն կողմէն օգնութիւններ կեսր. մասնաժողովի ձեռօք որ աշխարհի ամեն կողմ գտնուած հայերէն նպաստ կընդունէր և գլխաւորապէս Ռուսաստանի այն ազնիւ հայերէն, որոց քսակին բերանը երբէք գոցուած չէ, այնչափ նուիրելու մէջ են իրենց դժբաղդ ազգակցաց, որք Թիւրքիոյ լծին ներքև կը հեծին: Մրմռաց սովը և սկսաւ մրցել օգնութեանց դէմ, զանոնք ի դերև հանելու համար, որով երթալով բարձրացաւ ցորենին գինը և 20-ապատիկ եղաւ: Ցմեռն օգնական և դաշնակից էր նմա, կառավարութիւնը արծարծող էր սովը: Բայց միւս կողմէն դիւցազնացան հեռաւոր հայերը, Մանչէսթերէն մինչ Կալկաթա, Հակարջային ծովէն մինչ Արջային ովկիանոս որչափ հայեր կային, դոյթ տուեալ գօսեպնդեալ միացան ազատել սովատանջներն: Մատակարարութեան մասնաժողովին նախագահ Խրիմեան հայրիկն էր. կեսր. մասնաժողովը հայոց Պատրիարքի հովանեաց ներքև էր, հանգանակութեան ամենաքաջ մշակ նոյն իսկ «Մշակն» էր, «փորձ» և «Մեղուն» աշակից էին այնմ, վերջապէս համախուռն ջանք մը և աշխատութիւն մը ախոյեան արձանացան սովուն դէմ և թէպէտ նա իւր բոլոր ճիգն թափելով 25 անգամ առաւելեց արմտեաց գինը, բայց հազիւ 500-ի չափ հայ արարածներ իրեն զոհ ըրած՝ ընկրկեցաւ. չարաչար և ամենայն զօրութեամբ ծանրացաւ քրդաց վրա կոտորել անխնայ:

Այսպէս ահա աքանչելի դիւցազնութեամբ հայ սովատանջներն ազատիլ յաջողուեցաւ անհուն շնորհակալութիւն կը մատուցանեմք բոլոր ազգասէր և մարդասէր նուիրատուաց, յիշեցուցնելով իրենց որ իւրաքանչիւր լումայն մի մի կենաց փրկութեան առիթներ էին: Բայց այժմ մի կարևոր կէտի վրա ալ պիտի դարձուցեմ ընթերցողաց և նուիրողաց ուշադրութիւնը: Ահա թէ ինչ է այն:

Այն նախանձելի նպաստներն ու ճգնութիւններն, որ եղան և դեռ կը շարունակուին լինիլ հայերը ազատել մահէ, երկու տեսակ աքանչելի աքդիւնք ունեցան, երկուքն ալ մէկ քան զմիւս զերազանց և պանծալի: Առաջին այս է որ սովատանջներն մահէ ազատեցան, երկրորդն այս է որ Հայաստանի ժողովուրդը տեսնելով այն ջանքերը՝ յետին աստիճան ոգևորեցան, զօրացան և յոյս առին: Մինչև ցարդ չը գիտէին այս կողմի դիւղացիք թէ երկրագունտի վրա իրենց համար խորհող և աշխատող մարմիններ կան, իսկ այս պարագային մէջ ներկայ ակներև օգնութիւնը տեսնելով, մեծապէս սիրտ առին: Քաջալերուեցան համոզվելով որ տէր և ապաւէն ունին և կարծուածին չափ անօգնական ու անտէրունչ չեն եղեր: Այնչափ ծանրակշիռ և մեծ է այս երկրորդ արդիւնքը որ, եթէ նոյն իսկ սով ալ չը լինէր զայն առաջ բերելու համար, պէտք էր օգնութեամբ մը զգացունել Հայաստանցի հայոց, որ անտէր չեն բոլորովին, իրենց վրա մտածող և խորհող կայ, և ամեն պարագայի մէջ օգնութիւն պակաս չը պիտի լինի իրենց մէջ.... Գիտէք թէ էր այսպէս կասեմք, վասն զի Հայաստանի հայոց քով թէ կայ մի շատ պակաս բան, այդ վստահութիւնն է, այդ յանձնապաստանութիւնն է: Նոքա չեն գիտեր վստահիլ իրենց ուժին, իրենց խելքին, իրենց մարմնոյն: Նոքա լքած, ինկած են բոլորովին այն բաղմադիմի արկածներին, որք շարունակաբար իրենց վրա եկեր են և կը դան: Իսկ երբ որ այդ լքեալ սրտերու մէջ դրիր ինքնավստահութեան և, կուզես ասա, յանձնապաստանութեան գաղափարը, այն ժամանակ աքանչելապէս կը փոխուի հայաստանցի հայուն բնաւորութիւնը և մարմնական, հոգեկան ու մտաւորական դրութիւնը:

Ահա այդ պաշտելի, այդ կեցուցիչ, այդ զօրացուցիչ գաղափարն հայոց մէջ տնկելու, աճեցունելու զօրաւոր միջոց մ'եղաւ ներկայ սովուն առթիւ եղած օգնութիւնը: Զգալի տարբերութիւն կը տեսնուի նոցա վրա այս քիչ ժամանակի մէջ: Անձամբ դիւրութիւն ունեցել եմ տեսնել շատ հայ գիւղացիներ, որ զիրար կը սրտապնդէին չը վախնալ այլ ևս քանի որ Կ. Պոլիս, Թիֆլիս, Եւրոպա և ուրիշ տեղեր բնակեալ հայերը չեն մոռցեր զիրենք և կօգնեն իրենց: Եկեղեցիներու մէջ կաղօթեն մահէ ազատուած սովալուկներն այսպէս, «փառք քեզ, Աստուած, որ ազատեցիր զմեզ մահէ և փառք աւելի անոր համար, որ փրկութիւններս նոյն իսկ մեր ազգակից և արիւնակից հեռաւոր հայոց չնորհիւ կատարեցիր: Ուրախ ենք, Տէր, կասեն, զի տեսանք, որ աշխարհի վրա մեզ ալ տէր և օգնական տուած ես եղէր, որք են մեր հեռաւոր ազգայինները: Թէ չունիմք կայսր, թագաւոր, պետութիւն և այլն, դէթ ունիմք ճշմարիտ եղբայրներ, որ ոչ նուազ օգնութիւն կը տան մեզ ամեն ժամանակ: Արարատեան և նորապէս ընկերութիւնները կը լուսաւորեն մեր միտքը, բազմաթիւ հայերը կօգնեն անոնց ի սէր մեր: Այժմ էլ որ սովու պատահեցանք, փութացին փրկել մեր կեանքը. զոհ եմք, Աստուած, կը մաղթեմք, տուր նոցա երկար կեանք, երկար յաջողութիւն և կատարումն իրենց ըղձից որ առ մեզ ունին:» Այս և այսպիսի աղօթքներ որ կը թռչին նոցա չրթներէն հասնել Ամենակալին գահոյից առաջ, կատարելապէս կը յայտնեն թէ ինչ ունին իրենց սրտին մէջ:

Ուրեմն, հայեր, մասնաւորապէս դուք, ով ռուսական մեծ պետութեան մէջ ապրող երջանիկ հայեր, շարունակեցէք ձեր նպաստներն, փրկուած են սովալուկ ձեր եղբայրներն մինչ օրս, անցուցելով տագնապին ամենէն մեծ ծանրութիւնը. ձեր և ձեզպիսեաց չնորհիւ չը կայ այսօր մի հայ, որ սովէ մեռնի: Ուրախութեամբ շարունակեցէք ձեր նպաստներն համոզուելով, որ ովկիանին մէջ կաթիլ մը ջուր լեցնել չէ ձեր լումայն, մէկ կոպէկն անգամ, այլ իրական արդիւնք կունենայ, այլ մի կեանք կազատի նովաւ: Տագնապն վերջանալու վրա է. չորս ամիս մնաց, մի թողուք որ մինչ ցարդ փրկուած կեանքերը այս չորս ամսի մէջ վտանգին: Հայաստանցի հայն բևեռուած հայրենեաց հողին վրա ձեզ ապաստանելով, չուզեր հեռանալ այնտեղէն, որ չը դառնայ Քրդստան, որ միշտ մնայ Հայաստան. ուստի փրկեցէք նոցա կեանքը, որ պահեն մեր հայրենիք մինչև մի օր մեզ տրուի իրապէս սովէն մեղմանալու վրա է. հունձերն առատ կերևին, վտանգն մօտ է վերջանալու, հետևապէս եթէ շարունակվին օգնութիւններն մինչև աշուն, մինչև հնձոց քաղը, այն ժամանակ կը փրկուին այլ և վտանգի ներքև եղող կեանքերը: Մի յուսահատիք, ասելով մեր օգնութիւններն վերջ չը պիտի բերեն տագնապին, զի ապահով եղէք, որ եթէ ներկային պէս շարունակուին օգնութիւններն, մեծապէս հարուած կառնու սովը և մեծապէս արդիւնք կունենայ օգնութիւնը. առանց օգնութեան չը կրնար ապրիլ ժողովուրդը. պէտք է շարունակվի դէթ մինչև հնձոց ժամանակը: Իսկ եթէ այն ատեն չը վերջանայ սովը, կը սոսկամ ասել թէ որչափ ծանր կը դառնայ ժողովրդի վիճակը: Ցուսալով թէ զայդ չը պիտի տեսնենք, չեմք խօսիր այն վիճակին վրա:

Արմտեաց գինը դեռ նոյն պէտք է համարել զոր ինչ գրեր ենք մեր մայիս 10-ին նամակով: Այլ ևս չեն բարձրանար, այլ ընդհակառակն կը նուազին, բայց նախ քան հնձոց քաղուիլը չէ կարելի ասել որ ածանութիւնը պիտի լինի. թէպէտ միայն մի անձրև մնացած է որ հնձոց յաջողութիւնն ապահովի:

Սմբատ

ՆԱՄԱԿ ԴԱՒՐԵԺԻՑ

—

Մայիսի 10

Կարդալով ձեր պատուական «Մշակի» մէջ Վասպուրականի սովալուկների անտանելի տանջանքներն, որ անգութ սովին զոհ են լինում շատերը. իրաւ ամեն մի տողն կարդալով իրաքանչիւր մի հայի վրա սև ամպ է չրջապատում: Ուստի մենք մեր վրա առնելով սրբազան պարտաւորութիւն և եղբայրական զգացմունքն հաւաքեցինք Դավրէժու օտարականներից յօգուտ Վանայ սովատանջների 74 բուրլ, որով ներփակեալ նամակս ուղարկեցինք ձեզ և խնդրում ենք անմիջապէս հասուցանէք ուր հարկն է և բարեհաճեցէք տպագրել պատուելի նուիրատուաց անուններն:

Ալէքսան Թամիրեանց չուչեցի 6 ր., Յովակիմ Բեջանեանց չուչեցի 6 ր., Ոսկան Քամալեանց չուչեցի 3 ր., Մարտիրոս Տէր-Միքայէլեանց ագուլեցի 6 ր., Յարութիւն Հայրապետեանց հանդամիջեցի 2 ր. 20 կ., Յարութիւն Սուլխանեանց հանդամիջեցի 6 ր., Սարգիս Ավագեանց ագուլեցի 3 ր. 20 կ., Պետրոս Մելիք-Սարգիսեանց նախիջեւանցի 6 ր., Գրիգոր Բեջանեանց չուչեցի 6 ր., Բաղդասար Բուտաղեանց սալմաստցի 3 ր. 20 կ., Պօղոս Պօղոսեանց Թիֆլիսեցի 6 ր., Պօղոս Մարիմեան տրապիզօնցի 3 ր. 20 կ., Լուսանկար Յուսիկ Փափազեանց վանեցի 3 ր. 20 կ., Պօղոս Տէր-Պօղոսեանց չուչեցի 1 ր., Յովակիմ Տէր-Գասպարեանց չուչեցի 2 ր. 20 կ., Սարգիս Ա. Մարգարեանց չուչեցի 2 ր. 20 կ., Բախչի Յովհաննէս եանց չուչեցի 1 ր., Մովսէս Անանեանց չուչեցի 2 ր. 20 կ., Ներսէս Վարդանեանց 5 ր. 40 կ.: Բոլորը գումարն է եօթանասուն չորս ր.:

Օտարականք

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Կ. ՊՈԼԻՍ, 22 յունիսի: Մտքերի յուզմունքը սաստկանում է. վախենում են մահմետական ֆանատիկոսութեան յայտնվելուց: Սուլթանը և մինիստրները գլուխը կորցնում են, բայց Բերլինի կոնֆերէնցիայի վճիռներին ընդդիմադրելը հաւանական է երևում: Սոֆթաները պալատական կուսակցութեան հետ միասին սպառնում են հակառակ դէպքում գահընկեց անել սուլթանին: Բ. Դուռը հրաժարվեց Դուլցինո զիջանել Չէրնոգորիային:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 յունիսի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ր. 25 կ., երկրորդ 92 ր. 12 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 229 ր. 25կ., երկրորդ 224 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը 92 ր., երկրորդ 92 ր., երրորդ 91 ր. 62 կ., ոսկի 7 ր. 75 կ.,: Ռուսաց 1 րուբլ Լօնդօնի վրա արժէ 25,62 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա 219 մարկ 50 պֆ., Փարիզի վրա 269 ֆր. 75 սանտիմ: Բօրսայի տրամադրութիւնը հանգիստ է:

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՕԶԴՕՔԻ

Հայոց օրիորդաց դպրոցի համար պահանջվում է մի ՎԱՐԺՈՒՀԻ նպաստաւոր պայմաններով: Ցանկացողները կարող են դիմել «ՄՇԱԿԻ» խմբագրատանը պայմանների մասին բանակցելու համար:

1—10

ԲԷԱԼԱԿԱՆ գպրոցի 6-դ դասատան ԱՇԱԿԵՐՏ ցանկանում է մասնաւոր ԴԱՍԵՐ ունենալ և ՊԱՏՐԱՍՏԵԼ երեխաներին այդ դպրոցի ԶԱՆԱԶԱՆ ԴԱՍԱՏՈՒՆՆԵՐԻ համար: Հասցէն «Մշակի» խմբագրատանը:

2—2 (2)

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախվում են օլէօգրաֆիական պատկերներ 20% զեջու մով. վերարկուներ 6—0 ր., խոզանակներ պամնեֆտուխրված են լցի մէջ առանձնապէս անգլիական խանութի համար, ամենալաւ ածելներ, արկղիկով 4 ր., Շեֆիլդի դանակներ 3—20 ր. դիւժինը, բրիտանական մետալի թէյամաններ 30 կ.,—3 ր., ցիտրատ մագնեզիա, Թիւրքական շերբէթ և ծարաւը Բագեցնող նիւթ 70 կ., ամենալաւ պօրտվէյն և խերես 1 ր. 40 կ. շիշը, շամպայն 3 ր. շիշը:

18—20

ՓՈՐՁԱՌՈՒ ՀԱՇՒԱՊԱՀ

Որ նորերումս է եկել, ցանկանում է տեղ ունենալ: Համաձայն է նոյնպէս անցած տարիներից մնացած տարեկան ՀԱՇԻՒՆԵՐԸ կազմել և թողած ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԳՐՔԵՐԸ և ԲԱԼԱՆՍՆԵՐԸ կարգի բերել: Հասցէն թողնել Փարիզ հիւրանոցում № 4:

8—10

Համեմատեցէք անգլիական խանութի թէյն գնով 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ., 1 ր. 80 կ. ֆունտի համար այն թէյերի հետ, որոնք ուրիշ խանութներում 30%-ով թանգ են ծախվում և այդ խանութի ֆունտը2 րուբլիանոց թէյը, ուրիշ տեղ 4 ր. ծախվող թէյի հետ:

19—100

ՀԱԳՈՒՍՏՆԵՐ երեխաների 4 ր., տղամարդկերանց 9—20 ր., ամբողջ հագուստը, պիջակ 5 ր., ՈՐՏԵՂ Է ԾԱԽՎՈՒՄ. ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ: Բամազէյ, պարուսին, տրիկօ, դրապ, փոստի թուղթ, թաւիշ կարիկօ և կառքերի համար, կալենկօր և բասիթէ և կառքերի համար, կալենկօր և այլն 25% ուրիշ տեղերից էժան: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ համեղ մուրաբաներ, կօնֆետներ հազի դէմ, պանիր, մագնեզիա, ամաններ, կարբօլեան փօշի, սապօն, պարսկական փօշի և այլն: Այս բոլորը և ուրիշ շատ ապրանքներ կարելի է գտնել ԱՄԵՆԱԷԺԱՆ գներով ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ:

19—20

Նուտով մամուլի տակից լոյս կը տեսնեն Պետերբուրգի Ֆրեօբէլեան ընկերութեան հետևեալ հրատարակութիւնների հայերէն թարգմանութիւնները:

I. Լակիդէի «ԵՐՐՈՐԴ ՈՍԿԻ» II. Ավենարիուսի «ԻՆՁ Է ԽՕՍՈՒՄ ՍԵՆԵԱԿԸ». III. Սմիրնովի «ՀՈՐԹԱՐԱՆ:» Դորանցից մէկը արդէն մամուլի տակ է:

ՄԷԿ ԵՐԻՏԱՍԱՐԴ, որ գիտէ հայերէն, ռուսերէն և ֆրանսերէն լեզուներ, կամենում է ԿԱՆՏՕՐՇՉԻԿԻ, ԳՈՐԾԱԿԱՏԱՐԻ կամ թարգմանի տեղ ունենալ: Ցանկացողները կարող են դիմել «Մշակի» խմբագրութեանը:

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գավրոնսկի կանանց հիւանդ. Գորալեվիչ ներքին հ., Ռոտինեանց կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շտեմբորսկի վեներական և կաշու հ., Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկեվիչ խիրուրգիական հ., Վզորով վեներական և բողազի հ., Ռէյխ աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ. Կրասնօգլեադօվ, Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ և Ռուդվօվսկի ներքին հ., Շտէյմբօրսկի վեներական և կաշու հ., Աստուածատուրով կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վզորով վեներական և բողազի հ., Ռոտինեանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գավրոնսկի կանանց հ., Մինկեվիչ խիրուրգիական հ., Կրասնօգլեադօվ և Լիսիցեվ ներքին հ., Բախուտօվ մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտէյմբօրսկի և Աստվածատուրով վեներական և կաշու հ., Բաբայեվ ջղային և ներքին հ.:

Շաբաթ Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Բաբօվ կուրծքի հ., Եանկօվսկի վեներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վզորով բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբաեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլէկտրիական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիեվսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Ատամնաբոյժ Օբրեխտ աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի փերեկաւոր Լիսիցեվ:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ

Ի Ւ Լ Ի Ի Հ Ե Ն Ր Ի Խ Ց Ի Մ Ե Ր Մ Ա Ն Ի,

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, ԲՈԼՇԱՅԱ ՄՈՐՍԿԱՅԱ, № 42

Առաջարկվում են արտասահմանի ամենալաւ գործարաններից նորերումս ստացված երաժշտական գործիքներ:

ՋՈՒԹԱԿՆԵՐ 2½ ր., 5 ր., 6 ր., 8 ր., 12 ր., 20 ր., 30 ր., 50 ր., 60 ր. և աւելի թանգ մինչև 150 ր., ԿՆՏՆՏՈՑՆԵՐ (смычекъ) 50 կ., 1½ ր., 2 ր., 3 ր., 5 ր., 8 ր., և աւելի թանգ մինչև 25 ր., ԱՐԿՂՆԵՐ 2½ ր., 5½ ր., 6 ր., 7 ր., 10 ր. և աւելի թանգ մինչև 20 ր.: Հին իտալական և գերմանական ջութակներ մինչև 600 ր.: ՋՈՒԱԿՆԵՐ փոքր դիրքի երեխաների համար 2 ր. 50 կ. մինչև 30 ր.: Ջութակի շկօլա (ինքնուսուցիչ) 2 ր., 3 ր., 4 ր., 5 ր.: ԱԼՏԵՐ 9 ր., 15 ր., 25 ր., 50 ր. և աւելի թանգ: ՎԻՕԼՕՆՉԵԼՆԵՐ 20 ր., 30 ր., 40 ր., 60 ր., 100 ր. և աւելի թանգ մինչև 600 ր.: Վիօլօնչելի շկօլա 4 ր.: ԿՕՆՏՐԲԱՍ 45 ր., 65 ր., 120 ր. և աւելի թանգ: ԳԻՏԱՐ 3 ր. 50 կ., 5 ր., 10 ր., 15 ր., 20 ր., 40 ր., 50 ր. և աւելի թանգ մինչև 100 ր.: Գիտարի շկօլա (ինքնուսուցիչ) 1 ր. 50 կ., 2 ր., 3 ր.: ՑԻՏՐԱՆԵՐ 14 ր., 16 ր., 25 ր., 35 ր., 50 ր. և աւելի թանգ մինչև 100 ր.: Ցիտրայի շկօլա 2 ր., 3 ր. 50 կ., նոտաներ 40 կ., 60 կ., 90 կ. իւրաքանչիւր տետրակը: ՄԱՆԴՕԼԻՆ 10 ր., 20 ր., 30 ր., 40 ր., և աւելի թանգ. շկօլա 3 ր.: Ամենալաւ իտալական ԼԱՐԵՐ այդ գործիքների համար, ԿԱՄԵՐՏՕՆ 40 կ., 50 կ., 1 ր., 50 կ., 2. ր.. 6 ր.: Սուրդին կանիֆօլ և այլ պատկանելիք: ՄԵՏՐՕՆՕՄ 8 ր., 12 ր.: Երկաթի ծալվող ՊԻՒՊԵՏՐՆԵՐ 5 ր.: Երկաթի ծալվող պիւպետրներ մոմակալներով 6 ր., 8 ր.: Գերմանական ԳԱՐՄՕՆՆԵՐ 4 ր., 4 ր. 50 կ., 5 ր. 50 կ., 7 ր. 50 կ., 10 ր., 15 ր., 20 ր., 24 ր., 30 ր., 40 ր., և աւելի թանգ: Գարմօնիայի շկօլա և նոտաներ 50 կ., 75 կ., 1 ր., 1 ր. 50 կ., իւրաքանչիւր տետրակը: ԿՕՐՆԵՏԱ-ՊԻՍՏԱՆ 18 ր., 25 ր., 30 ր., 40 ր., 60 ր. և աւելի թանգ մինչև 100 ր.: Շկօլա (ինքնուսուցիչ) 1 ր. 50 կ., 4 ր., 5 ր.: ԱԼՏԳՕՐՆ, ՆՇԱՆԱՓՈՂԵՐ, ՏՐՕՄԲՕՆՆԵՐ, ՖԼԷՅՏԱՆԵՐ 3 ր., 5 ր., 7 ր., 10 ր., 12 ր., 20 ր., 30 ր., 40 ր., 60 ր. և աւելի թանգ: Շկօլա (ինքնուսուցիչ) 1½ ր., և 3 ր., նոտաներ 40 կ., 1½ ր., 3 ր. իւրաքանչիւր տետրակը: ԿԼԱՐՆԵՏՆԵՐ 6 ր., 8 ր., 10 ր., 15 ր., 20 ր., 30 ր., 40 ր., և թանգ մինչև 60 ր.: Կլարնետի շկօլա 4 ր., Բեկօլօ, Ջականի, Ֆլաժօլետներ: Անգլիական ԿՕՆՑԵՐՏԻՆՕ 30 ր., 38 ր., 45 ր., 55 ր., 70 ր., 100 ր., և թանգ մինչև 160 ր.: Շկօլա 3 ր., նոտաներ 50 կ., 75 կ., 1 ր., 1½ ր., Գերմանական կօնցերտինօ 3 ր., 4 ր., 5 ր., 8 ր., 10 ր., 12 ր., 15 ր., և թանգ մինչև 30 ր.: Շկօլա (ինքնուսուցիչ) 75 կ., նոտաներ 40 կ., և 1 ր. իւրաքանչիւր տետրակը երաժշտական արկղներ 2 ր., 4 ր., 6 ր., 10 ր., 25 ր., 30 ր., 40 ր., 55 ր., 75 ր., 90 ր., և թանգ մինչև 200 ր.: ՖԻՍԳԱՐՄՕՆՆԵՐ 90 ր., 100 ր. 120 ր., 150 ր., 175 ր., 250 ր. և աւելի թանգ: ԳԱՐՄՕՆՆԵՐ ՖԼԷՅՏԻ 40 ր., 45 ր., 60 ր., 75 ր., 90 ր., ԳԱՐՄՕՆՆԵՐ ֆլիւտի ՕՐԳԱՆՕՎ 175. և 225 ր.: ՇԱՐՄԱՆԿԱ 8 ր., 12 ր., 20 ր., 30 ր., 40 ր.: Իտալական չարմանկաներ 150 ր., 200 ր., 250 ր.: ՕՐԳԱՆՆԵՐ թռչունների համար 10 ր., 15 ր.: Թմբուկներ, լիտավրներ, բունչուկներ, բանդօնիօն, մետալական չրթունքների բէկաներ, եաանկիմներ, գարմօններ և այլն:

Օտար քաղաքներից ստացված պատուէրները կատարվում են անյապաղ և ճշտութեամբ: Ճանապարհածախսը գնողին է: Ծախվում են հաստատ և մեծ քանակութեամբ:

1—1

На Воронцовской Набережной, въ домѣ Г-жи Варламовой отдается въ наемъ квартира о 5 комнатахъ, съ кухнею, большою конюшнею и сараемъ. Объ условіяхъ спросить въ Тифлисской Городской Управѣ.

Ծախվում են ԸՆԿՈՒԶԵՆՈՒՑ լաւ շինված ՊԱՀԱՐԱՆՆԵՐ (շկաֆներ) իրանց բոլոր յարմարութիւններով: Կարելի է տեսնել ամենայն օր Սօլօլակ, տուն իշ. Սումբատովի, Վարշավսկայա պեկարնիա:

2—5 (2)

Յուլիսի 1-ից ՎԱՐՇԱՎՍԿԱՅԱ ՊԵԿԱՐՆԻԱՅԻՆ կից կը բացվին ՍԵՆԵԱԿՆԵՐ, որտեղ կարելի կը լինի առանց ԿԱՀԻ, ՇՕԿՕԼԱԴ, ԹԷՅ և պատրաստած հանրային ճաշատուն ՏՐԻ:

2—40

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Հագուստներ, բեհեզներ, գանակներ, գրիչներ, անուշահոտութիւններ, սապօն, գուլպաներ, թաշկինակներ և այլն, ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ:

10—20

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է Զաք. Գրիգորեանցի «Կովկասեան վաճառանոցում» Ընդհանուր աշխարհագրութիւն, Ա. տարի, Նախագիտելիք (հայրենագիտութիւն Թիֆլիսի) 5 պատկերներով Աշխատասիրութիւն Ն. Սիմէօնեանց: Գին 35 կոպ. գումարով առնողներին 20% զիջում կը լինի:

Մամուլի տակ են, Ընդ. Աշխ. Բ. տարի, մասն ուսումնական (մաթեմատիկական) Բնական և ընդ. Աշխ. Գ. տարի, մասն քաղաքական: Վերջին երկու գրքերի տպագրութիւնն աւարտելուց յետոյ կը հրատարակուեն գները: Օտար քաղաքացիք դիմում են:

Въ Тифлисѣ· Кавказская кни... торговля З. П. Грикурова.

10—20

Вышелъ изъ печати и поступилъ ... продажу VI томъ „Сборника свѣд... о Кавказѣ", изданія Кавказскаго ... тистическаго Комитета, содержащ... себѣ:

«ТИФЛИСЪ ПО ОДНОДНЕВНОЙ ПЕРЕПИСИ 25 марта 1876 г.»

всего 570 страницъ in 4, съ ... приложеніями, а именно:

1) 15 литографированныхъ рас... шенныхъ графическихъ таблицъ;

2) 2 вида Тифлиса: по Шар... (1671 г.) и Турнефору (1701 г.);

3) копія съ плана Тифлиса по ... вичу Вахушту (1739 г.);

4) планъ современнаго Тифлиса.

Продажа производится въ книж... магазинахъ: Беренштама, Кавказ... книжной торговлѣ и Центральной к... ной торговлѣ. Цѣна 4 руб. сер.; на ... ресылку прилагается за 5 фунт.

Дозволено Цензурою 24 Іюня 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона